Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցուպատմություն» առարկայի
հանրապետական փուլ
10-րդ դասարան

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. **Հայոց եկեղեցու տաղավար տոներն են՝** *(0,5 միավոր)*
   1) Ս. Ծնունդ, Ս. Հարություն (Զատիկ), Պայծառակերպություն, Ս. Աստվածածնի վերափոխում, Խաչվերաց
   2) Ս. Ծնունդ, Տյառնընդառաջ, Ս. Հարություն (Զատիկ), Պայծառակերպություն, Ս. Աստվածածնի վերափոխում
   3) Ս. Ծնունդ, Ծաղկազարդ, Ս. Հարություն (Զատիկ), Պայծառակերպություն, Ս. Աստվածածնի վերափոխում
   4) Ս. Ծնունդ, Ս. Հարություն (Զատիկ), Կաթողիկե Ս. Էջմիածնի տոն, Պայծառակերպություն, Ս. Աստվածածնի վերափոխում

2. **Վրթանես Ա Պարթևը գահակալել է՝** *(0,5 միավոր)*
   1) 325–333 թթ.
   2) 333-341 թթ.
   3) 341-347 թթ.
   4) 347-353 թթ.

3. **Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը հիմնադրվել է՝** *(0,5 միավոր)*
   1) 1441 թ.
   2) 1446 թ.
   3) 1453 թ.
   4) 1461 թ.

4. **Հայոց ո՞ր կաթողիկոսն է հրավիրել Հռոմկլայի համահայկական եկեղեցական ժողովը:** *(0,5 միավոր)*
   1) Գրիգոր Գ Պահլավունի
   2) Ներսես Դ Շնորհալի (Կլայեցի)
   3) Գրիգոր Դ Տղա
   4) Գրիգոր Ե Քարավեժ

5. **1836 թ. եկեղեցական կանոնադրությունը գործել է մինչև՝** *(0,5 միավոր)*
   1) 1914 թ.
   2) 1917 թ.
   3) 1918 թ.
   4) 1920 թ.

6. **1889 թ. Խորեն Աշըգյան պատրիարքի և Մաղաքիա Օրմանյանի ջանքերով հիմնվել է՝** *(0,5 միավոր)*
   1) Արմաշի դպրեվանքը
   2) Սանասարյան վարժարանը
   3) Երամյան վարժարանը
   4) Վարագավանքի դպրոցը

7. **Դվինի առաջին ժողովը գումարվել է՝** *(0,5 միավոր)*
   1) 506 թ.
   2) 516 թ.
   3) 544 թ.
   4) 554 թ.

8. Որտե՞ղ է գտնվում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի նստավայրը:

1) Անկարա 3) Ստամբուլ *(0,5 միավոր)*
2) Իզմիր 4) Ադրիանապոլիս

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. 226 թ. Իրանում պարթև Արշակունիները գահընկեց արվեցին, և գահ բարձրացան _____ տոհմի ներկայացուցիչները: *(1 միավոր)*

10. Վաչագան Բարեպաշտի հրամանով Արցախի _____ թագավորական ամառանոցում գումարվեց ժողով, որին մասնակցում էին Արցախի, Ուտիքի, ինչպես նաև Բուն Աղվանքի ազնվականներն ու եպիսկոպոսները: *(1 միավոր)*

11. Սուրբ ---------- Հայոց եկեղեցու կողմից դասվել է սուրբ Թարգմանիչների կողքին, իբրև հայոց մեծագույն սրբերից մեկը, իսկ 2015 թ. Հռոմի պապ Ֆրանցիսկոսը նրան հռչակեց «Տիեզերական եկեղեցու վարդապետ»: *(1 միավոր)*

12. Հայոց եկեղեցու և ողջ հայության մշակութային, հոգևոր և հասարակական կյանքում նշանակալից իրադարձություն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական օրգանի՝ ---------- հանդեսի հրատարակումը: *(1 միավոր)*

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Համապատասխանեցնել իրադարձությունները տարեթվերին.

(0,25 X 4 = 1 միավոր)

1. Կոստանդնուպոլսի տիեզերական ժողովը
2. Եփեսոսի տիեզերական ժողովը
3. Միլանի հրովարտակի հրապարակումը
4. Նիկիայի տիեզերական ժողովը

ա) 325 թ.
բ) 381 թ.
գ) 431 թ.
դ) 313 թ.
ե) 451 թ.

1	
2	
3	
4	

14. Հայոց կաթողիկոսների գահակալման տարեթվերը համապատասխանեցնել նրանց անուններին. *(0,25 X 4 = 1 միավոր)*

1. Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի
2. Հովհաննես Ը Կարբեցի
3. Ներսես Ե Աշտարակեցի
4. Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի

ա) 1866-1882 թթ.
բ) 1858–1865 թթ.
գ) 1892-1907 թթ.
դ) 1831–1842 թթ.
ե) 1843–1857 թթ.

1	
2	
3	
4	

№ 15

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

«Հայրենակիցնե՛ր, եղբայրնե՛ր և որդինե՛ր, հին դարերում, երբ հայոց զորքը պատրաստվում էր թշնամու դեմ գնալու, նրա հրամանատարները գալիս էին Էջմիածին՝ կաթողիկոսի մոտ՝ նրա աջը համբուրելու և օրհնությունն առնելու: Բայց այս անգամ վտանգն այնքան ահավոր է ու մեծ, ահա ես եմ Սուրբ Էջմիածնից եկել ձեր բոլորի ձեռքը համբուրելու, որ փրկենք հայրենիքը, փրկենք ձեր պատիվը, հայի պատիվը...»:

1. Ո՞ւմ խոսքերն են մեջբերված այստեղ: *(1 միավոր)*

_____

2. Որտե՞ղ է նա ասել այդ խոսքերը: *(1 միավոր)*

_____

№ 16-17

Նկար-առաջադրանք՝ կազմված երկու հարցից

(յուրաքանչյուր հարցին՝ 2 x 0,5 = 1 միավոր)

16.

1. Ո՞ր վանքի խաչքարերից է պատկերված լուսանկարում: *(0,5 միավոր)*

_____

3. Խաչքարագործ ո՞ր վարպետի աշխատանքն է այն: *(0,5 միավոր)*

_____

17.



1. *Ո՞վ է պատկերված նկարում:*
(0,5 միավոր)

_____

2. *Ո՞ր դպրոցի ուսուցչապետն է եղել նա:* *(0,5 միավոր)*

_____

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Ստորև թվարկված Հայ Առաքելական Եկեղեցու սպասավորներից ովքե՞ր են մասնակցել նշանավոր Խանասորի արշավանքին:

(1 x 2 = 2 միավոր)

1. Գևորգ վարդապետ Նալբանդյան (Ընծայր վարդապետ)
2. Հակոբ սարկավագ Ղևոնդյան
3. Բագրատ վարդապետ Թավաքալյան
4. Գրիգոր քահանա Ավագյան
5. Ներսես եպիսկոպոս Խարախանյան
6. Վարդան վարդապետ (Հեսու վարդապետ)
7. Հակոբ քահանա Սառիկյան
8. Եղիշե քահանա Խաչատրյան
9. Խորեն վարդապետ Վարդանյան
10. Քերոբ քահանա Շահնազարյան (Փոթորիկ քահանա)

19. Գտնել ճիշտ պնդումները: *(1 x 2 = 2 միավոր)*

1. Քահանա նշանակում է ուսուցիչ, հետևաբար քահանան պարտավոր է ուսումնասիրել և ուսուցանել Աստվածաշունչը, բացատրել եկեղեցական կանոնները, ծեսերը: Քահանայությունը, որպես գիտական աստիճան, շնորհվում է աբեղային:
2. Ճգնավորական կամ անապատական շարժումը Հայաստան էր ներթափանցել Պաղեստինից և Հունաստանից, ավելի ուշ Շահապիվանի ժողովում որոշվեց հովանավորել շարժումը, ճգնավորների համար հիմնել վանքեր ու կուսանոցներ:
3. Ըստ ավանդության՝ Հայաստան բերված Աստվածամուխ Սուրբ Գեղարդը պահվել է Ս. Էջմիածնում, սակայն մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանում տեղափոխվել է ավելի ապահով վայր՝ Այրիվանք:
4. Տասը պատվիրաններից (Տասնաբանյա) առաջին վեցի մեջ բացատրվում են մարդու պարտականություններն ու անելիքներն Աստծո հանդեպ, իսկ մնացած չորսում՝ եկեղեցու և մերձավորների հանդեպ:
5. XIII – XV դդ., երբ Ամենայն Հայոց կաթողիկոսության նստավայրը գտնվում էր պատմական Հայաստանի սահմաններից դուրս, Գանձասարի մետրոպոլիտը համարվում էր Մեծ Հայքի եպիսկոպոսների գլխավորը:
6. Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի նախաձեռնությամբ Ս. Էջմիածնում հրավիրված գաղտնի խորհրդաժողովը դիմեց Եկատերինա II կայսրուհուն՝ առաջարկելով Հայաստան զորք ուղարկել, որի օժանդակությամբ Հայաստանն ազատագրվելու էր:
7. Հայրապետական օծում ստանալուց 40 օր անց Գևորգ Զ կաթողիկոսը 12 եպիսկոպոսների մասնակցությամբ կատարում է մյուռոնօրհնեք, որը 33 տարի չէր կատարվել Ս. Էջմիածնի Մայր տաճարում:
8. 1994 թ. հունիսին հայրենանվեր հոգևոր-եկեղեցաշինական և գիտամշակութային գործունեության համար Վազգեն Ա վեհափառն արժանացավ Հայաստանի ազգային հերոսի բարձրագույն կոչմանը և «Հայրենիք» շքանշանին:

№ 20

Շարադրանք (2 միավոր)

Որո՞նք են յոթ մարդկային առաքինությունները և մոլությունները: Ներկայացրե՛ք և մեկնաբանե՛ք «Ոսկե կանոն»-ը: